ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՍԱՄՎԵԼԻ

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Զոյա Աղվանի Թադևոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Թաթուլ Նորայրի Մանասերյան

տնտեսագիտության թեկնածու
Նարեկ Համլետի Խուբլարյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի նոյեմբերի 21-ին, ժամը 14^{00}-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի թիվ 008 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0051, ք.Երևան, Հ. Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թվականի հոկտեմբերի 21-ին:

008 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար **տնտեսագիտության դոկտոր,պրոֆեսոր՝ Ա. Մ. Սուվարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Արտաքին տնտեսական գործունեությունը, տնտեսական հարաբերությունների միջազգայնացման ժամանակակից պայմաններում, համաշխարհային շուկայում երկրների դիրքերի ամրապնդման կարևորագույն և անբաժանելի ոլորտն է:

Ժամանակակից յուրաքանչյուր պետության արտաքին տնտեսական կապերը, որոշ իմաստով, համաշխարհային տնտեսության և միջազգային տնտեսական հարաբերությունների բաղկացուցիչ մասն են:

Տնտեսվարման որակապես նոր տիպին արագացված անցման, սեփականության նոր ձևերի ներդրման և բաց տնտեսության ձևավորման պայմաններում, որի նպատակը հայրենական արտադրողների մրցունակության բարձրացումն է, ինչպես ցույց է տալիս նախկին ԽՍՀՄ գրեթե բոլոր երկրների փորձը, տնտեսությունները բախվում են հակառակ իրավիճակի հետ. արտադրության էական անկում, բնակչության կենսամակարդակի նվազում: Պատճառներից մեկը այդ երկրներում ապրանք արտադրողների անընդունակությունն է արտադրելու արտաքին մրցակցության պահանջներին համապատասխանող ապրանքներ՝ ներքին շուկայի պահանջարկը անսահմանափակ ներմուծմամբ բավարարելու պարագայում:

Այդ երկրները, այդ թվում և ՀՀ-ն կանգնեցին մրցունակ շուկայական կողմնորոշում ունեցող տնտեսություն հիմնելու, արտաքին տնտեսական կապերը զարգացնելու և դիվերսիֆիկացնելու հիմնախնդրի առջև:

ՀՀ-ում, անկախացման տարիներից ի վեր իրականացվող բարեփոխումները, որոնք ուղղված են տնտեսվարման շուկայական իրական պայմանների ձևավորմանը, ընդգրկում են նաև արտաքին տնտեսական գործունեությունը: Ուշադրության է արժանի այն, որ տնտեսության վերափոխումների ոլորտում առաջին միջոցառումները ՀՀ-ում իրականացվեցին, ամենից առաջ, արտաքին տնտեսական կապերի ոլորտում: Այդ իրողությունը դարձավ մեր երկրի արտաքին տնտեսական գործունեության ազատականացման սկիզբը: Միաժամանակ, առկա են արտաքին տնտեսական գործունեության կառավարման համակարգի ձևավորման մի շարք հիմնախնդիրներ. մինչ այժմ երկարաժամկետ կտրվածքով հստակեցված չեն արտաքին տնտեսական կապերի բազմազանեցման և կարգավորման պետական միջոցառումները:

Տնտեսական աճի ռազմավարության մեջ արտաքին տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացումը կարևոր տեղ ունի և այն պետք է ուղղվի համաշխարհային առևտրում ՀՀ դիրքերի ամրապնդմանը և ապահովի նոր շուկաներ դուրս գալու գործընթացի իրականացմանը: Այդ նպատակի իրականացման եղանակներից մեկը արտաքին տնտեսական գործունեության դիվերսիֆիկացումն է, որը կարող է դառնալ տնտեսական հետագա բարեփոխումների, արտաքին տնտեսական կապերի ողջ համակարգի որակական վերակառուցման խթանման մեխանիզմ:

Արտահանման դիվերսիֆիկացումը պայմանավորում է դրա արդյունավետությունը և օպտիմալ կառուցվածքը, ապրանքների անվանացանկի ընդլայնումը, բարձր տեխնոլոգիական և մշակման բարձր աստիճան ունեցող արտադրանքի բաժնի աստիճանական ավելացումը, ինչպես նաև հայրենական արտադրողների և արտահանողների կողմից ապրանքների, ծառայությունների, տեխնոլոգիաների և կապիտալի նոր շուկաների յուրացումը: Ներմուծման դիվերսիֆիկացումը ենթադրում է արտադրության կարևորագույն գործոնների (հատկապես էներգակիրների,

գյուղատնտեսական մթերքների) ներմուծումից կախվածության թուլացում և դրանց մատակարարումների նոր աղբյուրների, հետևաբար և գործընկերների որոնում:

Արտաքին տնտեսական կապերի դիվերսիֆիկացման նպատակը պետք է լինի նաև տարածաշրջանային զարգացման կայունությունը:

Արտաքին առևտրային կապերի, որպես տնտեսական աճի գործոնի դերի ակտիվացումը հնարավոր չէ առանց պետության անմիջական աջակցության: Այստեղ տեղ գտած բազմաթիվ բացթողումները և թերությունները փաստում են, որ ՀՀ-ում արտաքին տնտեսական քաղաքականությունն ունի հայեցակարգային մոտեցման կարիք, որի հիմքում պետք է դրվի երկրի տնտեսական և քաղաքական շահի առաջնայնությունը: Զարգացող և շուկայական հարաբերությունների արմատավորման փուլում գտնվող երկրներում արտաքին տնտեսական կապերի բազմազանեցման տեսական և գործնական հարցերի ուսումնասիրությունը ամբողջական բնույթ չի կրում, ուստի դրանց զարգացման և ՀՀ տնտեսությունը համաշխարհային տնտեսության ներդաշնակ մաս կազմելուն առնչվող հիմնախնդիրների վերլուծությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է: Այդ հիմնախնդիրների տարբեր ասպեկտների ուսումնասիրությունը տեղ է գտել արտասահմանյան հեղինակների աշխատություններում և հայրենական տնտեսագետ-գիտնականների աշխատություններում: Սակայն դրանցում դիտարկվել են միջազգային տնտեսական կապերի տեսական, մեթոդաբանական և գործնական հիմքերը, տրվել են միջազգային տնտեսական հարաբերություններում՝ ըստ առանձին ուղղությունների երկրների մասնակցության արդյունավետության գնահատականը: Այնուհանդերձ, սրընթաց փոխվող աշխարհատնտեսական հարաբերությունների ներկա պայմաններում օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի տարբեր գործոնների, իրավիճակների ազդեցությամբ նախկին տնտեսական կապերը ձեռք են բերում որակական նոր հատկանիշներ: Բացի դրանից, երկրների արտաքին տնտեսական կապերի բազմազանությունը այնքան փոխկապված է, որ մեկ ոլորտում տեղի ունեցող գործընթացների գնահատականը հնարավոր չէ տալ, առանց մնացած ոլորտներում առկա իրավիճակի ամբողջական վերլուծության: Նշվածը դարձել է տնտեսագետ-հետազոտողների շրջանակներում տարակարծությունների, նոր մեկնաբանությունների ձևավորման շարժառիթ:

Թերևս այդ հանգամանքով է պայմանավորվում գիտական թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը տնտեսական զարգացման ներկա փուլում ՀՀ արտաքին տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման գիտական հիմքերի մշակումն է՝ բազմազանեցման մոտեցման հիման վրա:

Նշված նպատակի իրացումը գործնական հիմքերի վրա փոխադրելու, ՀՀ արտաքին առևտրային կապերը ակտիվացնելու նկատառումներով ատենախոսության շրջանակներում դիտարկվել են հետևյալ խնդիրները՝

- աշխարհատնտեսական փոխազդեցությունների տեսամեթոդաբանական հետազոտությունների քննական վերլուծության հիման վրա տալ համաշխարհային տնտեսության ներկա ժամանակաշրջանին համարժեք բնութագրում,
- դիտարկել ՀՀ արտաքին տնտեսական կապերի զարգացման և ընդլայնման հնարավորությունները գլոբալացման համատեքստում,
- բացահայտել արտաքին տնտեսական կապերի բազմազանեցման գործոնները,

- վերլուծել հարևան երկրների հետ ՀՀ տնտեսական կապերի դինամիկան և վեր հանել դրանց զարգացման առանձնահատկությունները, այդ երկրների հետ արտաքին տնտեսական կապերի բազմազանեցման հնարավորությունները,
- վեր հանել ՀՀ տարածաշրջանային տնտեսական համագործակցության բազմազանեցման այլընտրանքային ուղիները,
- ուսումնասիրել և հստակեցնել ՀՀ արտաքին տնտեսական կապերի արդի մարտահրավերները,
- գնահատել ՀՀ արտահանման համեմատական արդյունավետությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ժամանակակից համաշխարհային տնտեսության պայմաններում աշխարհի տարբեր երկրների և տարածաշրջանային միավորումների հետ ՀՀ արտաքին տնտեսական կապերն են, իսկ առարկան՝ արտաքին աշխարհի հետ ՀՀ տնտեսական փոխազդեցության համակարգն է:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Արտաքին տնտեսական կապերի զարգացման տեսական հետազոտությունների ուսումնասիրության համար հիմք են ծառայել դասական տնտեսագիտության հիմնական դրույթները, արտաքին տնտեսական կապերի ժամանակակից գործընթացների բազմակողմանի և խորը հետազոտությանը նվիրված հայրենական և արտասահմանյան գիտնականների մենագրությունները, ատենախոսությունները, աշխատությունները և գիտական հոդվածները: Որպես տեղեկատվության գործնական աղբյուր ծառայել են արտաքին տնտեսական գործունեությունը կարգավորող ՀՀ համապատասխան օրենքները, իրավական և նորմատիվային ակտերը, հայեցակարգերը:

Ատենախոսության գործնական նշանակությունը հիմնավորելու նպատակով օգտագործվել են ՄԱԿ-ի, ԱՀԿ-ի, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և այլ միջազգային կազմակերպությունների և ՀՀ պաշտոնական տեղեկատվության և այլ աղբյուրներում հրապարակված վիճակագրական տվյալները, տեղեկագրերը, փորձագիտական գնահատականները: Հետազոտությունում վերլուծված և ներկայացված բոլոր վիճակագրական տեղեկությունները խմբավորվել և հաշվարկվել են ՀՀ ԱՎԾ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական նյութերի հիման վրա:

Ատենախոսության գիտական նորույթը: Կատարված հետազոտության շրջանակներում լուծվել են մի շարք խնդիրներ, որոնցից գիտական նորույթ են հանդիսանում հետևյալները՝

- Հստակեցվել է «համաշխարհային տնտեսություն» հասկացության տարածում ստացած մեկնաբանությունը՝ հաշվի առնելով համաշխարհային տնտեսության ինստիտուցիոնալացման իրողությունը, երկրների արտաքին տնտեսական կապերի կարգավորման համար ֆինանսական ենթակառուցվածքների ձևավորումը, արտահանման-ներմուծման գործարքների բազմազանեցումը:
- Տնտեսաչափական մոդելների միջոցով գնահատվել է ՀՀ արտաքին տնտեսական կապերի փոխազդեցությունը և պարզաբանվել են բավականին բարձր կոռելացիոն կախվածություններ ՀՆԱ-ի, արտահանման, ներմուծման և դրամական փոխանցումների միջև, ներմուծման, արտահանման և դրամական փոխանցումների միջև, դրամական փոխանցումների և արտահանման միջև, որոնք սակայն, լագային կտրվածքով ունեն փոխազդեցության տարբեր դրսևորումներ:

- Բացահայտվել են ՀՀ արտահանման բազմազանեցման գերակա ուղղությունները ապրանքների քառանիշ դասակարգմամբ արտահանման համեմատական մասնագիտացման գործակիցները հաշվարկելու հիման վրա:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Աշխատանքի արդյունքները կարող են ծառայել որպես տեսական հիմք արտաքին տնտեսական կապերը լուսաբանող տեսությունների ժամանակակից մեկնաբանումների և արտաքին առևտրային, ներդրումային քաղաքականության ռազմավարական նշանակության խնդիրների լուծման գործում: Ատենախոսության արդյունքները հետաքրքրություն են ներկայացնում նաև Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի զարգացման միջպետական, տարածաշրջանային ծրագրերի նախապատրաստման և արտաքին տնտեսական գործունեության հեռանկարային ձևերի ընտրության ժամանակ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքի հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի նիստում: Աշխատանքի գիտական արդյունքները հեղինակի կողմից հրապարակվել են յոթ գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ներառում է 19 աղյուսակ և 12 գծապատկեր: Ատենախոսությանը շարադրված է 144 էջի վրա (առանց հավելվածների):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***ներածությունում*** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպված են ստացված գիտական արդյուքները և նորույթը, ինչպես նաև արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ ***«Աշխարհատնտեսական կապերի զարգացման արդի միտումները»*** գլխում ներկայացվել է աշխարհատնտեսական կապերի տեսա-մեթոդաբանական հետազոտությունների արդի վիճակը, ժամանակակից պայմաններում երկրների առևտրատնտեսական կապերի բնութագիրը և ուսումնասիրվել գլոբալացման համատեքստում արտաքին տնտեսական կապերի էվոլյուցիան:

Աշխարհում տեղի ունեցող հիմնարար վերափոխումների արագությունը, աշխարհատնտեսական կապերի քաղաքականացումը որոշակի պահանջներ են առաջադրում տնտեսական ճանաչողությանը՝ ինչպես տեսական, այնպես էլ կիրառական առումով: Այդ տեսանկյունից, միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման ներկա պայմաններում հատկապես կարևորվում են ազգային տնտեսությունների զարգացման ներուժային հնարավորությունները: Առաջին հայացքից թվում է, թե ազգային տնտեսության գործառնման (ֆունկցիոնավորման) հիմնախնդիրների վերլուծությունը՝ համաշխարհային համակարգի համատեքստում դժվարություն չի ներկայացնում, հատկապես, որ մերկանտիլիզմի դարաշրջանից մինչ օրս այն գտնվում է տնտեսագետ-հետազոտողների ուշադրության կենտրոնում: Ուշադրություն է գրավում այն փաստը, որ երկրների արտաքին տնտեսական կապերին առնչվող հիմնախնդիրներին նվիրված մասնագիտական գրականությունում գերակշռում են

էմպիրիկ հետազոտություններն ու մշակումները: Ակտիվորեն ընթանում է տեղեկատվության հավաքագրում և կուտակում, ստացված արդյունքների համալրում և ճշգրտում: Ստեղծվում է այն տպավորությունը, որ տնտեսագիտության տեսության դերը, խնդրո առարկայի համատեքստում, սահմանափակվում է տնտեսավարման ձևերի և փաստերի բազմազանության ամրագրմամբ: Նույնիսկ որոշ հետազոտողներ գտնում են, որ արդի համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող հիմնարար փոփոխությունների պայմաններում անհրաժեշտ է «գիտակցված հրաժարում «տեսությունից»՝ ի օգուտ տնտեսական միտումների և դրանց որոշիչների լուսաբանման»[1]:

Այդպիսի մոտեցումը ընդհանուր մեթոդաբանության հիմնախնդիրները, անխուսափելիորեն, տեղաշարժում է հետին պլան, դրանով իսկ թուլացնելով այդքան բարդ և բազմաչափ հետազոտության օբյեկտի (երկրների տնտեսական փոխազդեցությունների) ուսումնասիրության նպատակայնությունը և արդյունավետությունը: Դրա արդյունքում տնտեսագիտական իրողությունների ճանաչման գործիքները ներկայացվում են ոչ լիարժեք:

Ատենախոսությունում անդրադարձ է կատարվել ժամանակակից աշխարհատնտեսական կապերն արտացոլող այնպիսի հասկացությունների տեսական մեկնաբանությունների վերլուծությանը, ինչպիսիք են «համաշխարհային տնտեսություն» և «գլոբալ տնտեսություն» հասկացությունները:

21-րդ դարի համաշխարհային տնտեսության, որպես միասնական տնտեսական համակարգի բնութագրիչ, առանձնահատուկ գիծն արդեն շուկայական տնտեսությունը չէ: Աշխարհի գրեթե բոլոր երկրները, աննշան բացառություններով, զարգանում են շուկայական տնտեսության օրենքներով և սկզբունքներով: Շուկայական տնտեսությունը միջազգային տնտեսական կապերին երկրների ինտեգրման անհրաժեշտ, սակայն բավարար պայմանը չէ: Ըստ հեղինակի՝ համաշխարհային տնտեսության զարգացման ներկա դարաշրջանի միասնության գործոնը դրա վերազգային կարգավորումն է կամ ինստիտուցիոնալացումը: **Համաշխարհային տնտեսությունը միասնական տնտեսական տարածք է, որտեղ առանձին ազգային տնտեսությունների հարաբերությունների զարգացման համար կարևոր դեր են կատարում վերազգային՝ տարածաշրջանային և միջազգային կառույցները: Երկրների միջև կապիտալի, աշխատուժի, տեխնոլոգիաների, ծառայությունների շարժը և արժութային հարաբերությունները ենթարկվում են ինստիտուցիոնալ կարգավորման, որը միանգամայն տարբեր է ազգային կարգավորումից:** Ընդ որում տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումների շրջանակներում միասնական տնտեսական տարածքը, կարծես թե, պատնեշվում է մնացած աշխարհից՝ ձևավորելով խմբավորման կազմի մեջ մտնող երկրների արտադրության գործոնների և ծառայությունների տեղաշարժի շատ ավելի բարենպաստ և ազատական պայմաններ: Այլ խոսքով համաշխարհային ազատ շուկայական տարածքը «խոչընդոտվում» է ոչ միայն առանձին երկրների արտաքին տնտեսական, մաքսային քաղաքականության արդյունքում, այլ նաև տարածաշրջանային տնտեսական խմբավորումներում ձևավորվող խտրական արտաքին տնտեսական քաղաքականությամբ:

XXI դարի սկիզբը համաշխարհային տնտեսությունում և աշխարհատնտեսական կապերում բնութագրվում է սրընթաց ու հակասական գործընթացներով:Ամրապնդվում են

[1] Венд А. «Четыре социологии международной политики» // Международные отношения: социологический подход. Под ред. Цыганкова М.,1998, стр. 48-90.

երբեմնի զարգացող երկրների՝ Չինաստանի, Հնդկաստանի, Բրազիլիայի տնտեսական դիրքերը, ավելի են խորանում համաշխարհային ֆինանսական և էներգետիկ ճգնաժամերը, չեն կորցնում իրենց հրատապությունը գլոբալացման, ժողովրդագրական, պարենային, բնապահպանական մարտահրավերները: Դրանք ժամանակակից առևտրատնտեսական հարաբերությունների վրա թողնում են ոչ միայն քանակական, այլև որակական ազդեցություն:

Փոքր պետությունների դերը համաշխարհային տնտեսությունում միանշանակ պատկերացնել չի կարելի այն առումով, որ «փոքր տարածք» հասկացության հետ այն էական առնչություն չունի: Անցումը ձևականից՝ իրական միջազգայնացմանը կապված է աշխարհատնտեսական փոխազդեցությունների որակական փոփոխությունների հետ: Իրական միջազգայնացումը կապված է արտաքին տնտեսական կապերի արտադրական ներդրումային մոդելին անցնելու հետ: Էժան աշխատուժն ու հումքային ռեսուրսները գնալով ավելի քիչ են դիտարկվում որպես մրցակցային առավելություն, հետևաբար, այդ գործոնները ներկայումս օտարերկրյա ներդրումների տրամադրման երաշխիք չեն: Կապիտալն ամենից առաջ ուղղվում է դեպի տնտեսական քաղաքականության կանխատեսելիությանը և «խաղի կանոնների» միասնությանը:

Աշխարհի տարբեր երկրների տնտեսական զարգացման փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տնտեսական մրցակցության ուժգնացման ներկա պայմաններում աշխարհի ոչ մի երկիր իր արտաքին տնտեսական քաղաքականության հիմնախնդիրները չի լուծել առանց հաշվի նստելու հարևան երկրների հետ: Դրա վկայությունն են ներկայումս գործող տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումները (Եվրամիություն, ՆԱՖԹԱ, ՄԵՐԿՈՍՈՒՐ, ԱՊԵԿ և այլն): Ռազմավարական ինտեգրումը համաշխարհային մրցակցությանը դիմակայելու հիմնական լծակն է: Բազմաթիվ փորձերից հետո Ռուսաստանին, Բելառուսին, Ղազախստանին, Հայաստանին և Ղրղզստանին հաջողվեց ձևավորել Եվրասիական տնտեսական միությունը, որը տեղի ունեցավ ԱՄՆ-ի և Եվրամիության կողմից նոր ձևավորվող շուկաներում իրենց ազդեցությունը հաստատելու դեմ սուր պայքարի գնով: Սակայն Եվրասիական տնտեսական միության կազմի մեջ մտնում են տնտեսական զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող երկրներ, առկա են նաև էական սոցիալ-մշակութային և հոգևոր տարբերություններ, որոնք Միության հետագա ճակատագիրը դնում են կասկածի տակ: Եվրասիական տնտեսական միության կայացման հիմնական խոչընդոտը համագործակցող երկրների տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունն է:

Եվրամիության փորձի և հաջողված օրինակի վրա Եվրասիական տնտեսական միության կազմավորումը նախ պետք է հաշվի առներ այն, որ Եվրամիությունում սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ խնդիրների լուծման ժամանակ ընդունված է կոնսենսուսի սկզբունքը, ըստ որի ամեն գնով հասնում են ինտեգրմանը մասնակից բոլոր երկրների լրիվ համաձայնությանը: Միասնական որոշմանը այստեղ հասնում են երկարատև բանակցությունների, սկզբունքային հարցերի փոխհամաձայնեցման ճանապարհով: ԱՊՀ երկրների շրջանակներում, ի սկզբանե, ընդունվեց այլ սկզբունք. միավորվել նրանց հետ՝ ում հետ հնարավոր է միավորվել: Դրա հետևանքով 1990-ական թթ. սկզբներից նախկին համագործակցությունը «փրկելու» համար փորձ արվեց ձևավորելու ազատ առևտրային գոտի, մաքսային միություն,

տնտեսական միություն, այնուհետև արագացված տեմպերով ԵվրԱզԷսից՝ ազատ առևտրային գոտուց անցում կատարվեց Եվրասիական տնտեսական միությանը:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման փուլերի հաջորդականության և դրանցից յորաքանչյուրում հաջորդ փուլի նախադրյալների, պայմանների, ինստիտուտների ձևավորումը զուտ ակադեմիական հիմնախնդիր չէ: Յուրաքանչյուր փուլում լուծվում են, բացի առանձնահատուկ միջավայրի ձևավորման խնդիրներից, նաև բարձրորակ կադրերի, նորամուծական տեխնոլոգիաների, մասշտաբային ֆինանսական ռեսուրսների ձեռք բերման և արդյունավետ տնտեսական ինստիտուտների հիմնման խնդիրները: Տնտեսական ինտեգրման գլխավոր գործիքները տնտեսության կառուցվածքային և մակրոտնտեսական մոդեռնացմանն ուղղված համատեղ ծրագրերն են: ԵԱՏՄ շրջանակներում չկա գլխավոր խնդրի լուծման ընդհանուր ընկալում, հետևաբար գոյություն չունի հիմնավորված լուծում. արդյո՞ք ինտեգրացիան կհանգեցնի տնտեսական օգուտների, թե՞ ավելի կխորացնի քաղաքական և սոցիալական լարվածությունը:

Պետք է հաշվի նստել նաև այն փաստի հետ, որ մաքսային միության կայացման գլխավոր պայմանը համագործակցության երկրներից որևէ մեկի հետ ընդհանուր սահմանի առկայությունն է, հակառակ դեպքում փոխադարձ առևտրում մաքսատուրքերի վերացման, երկրների ներքին շուկաների սակագնային և ոչ սակագնային պաշտպանվածության էֆեկտի վերաբաշխումը կլինի ոչ արդարացի:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործունեության զարգացման առանձնահատկությունները»*** գլխում ներկայացվել են տնտեսական կապերի բազմազանեցման արտաքին գործոնները, ուսումնասիրվել են ՀՀ արտաքին տնտեսական կապերի բազմազանեցման տարածքային հիմնախնդիրները և մատնանշվել են ՀՀ տարածաշրջանային տնտեսական համագործակցության այլընտրանքային ուղիները:

Երկրների միջև տնտեսական կապերի զարգացման ներքին և արտաքին գործոնների հարաբերակցության մեջ առաջնայինը ներքին գործոններն են, դրանց օպտիմալ և արդյունավետ օգտագործումից, տնտեսության կազմակերպման առաջադիմական ձևերից է կախված արտաքին գործոնների նշանակությունն ու դերակատարությունը կոնկրետ երկրի տնտեսության վրա: Այն, թե արտաքին տնտեսական կապերի զարգացման հիմքում հիմնականում ո՞ր, ներքին թե՞ արտաքին գործոններն են ներգրավված, կարող ենք տարբերել ակտիվ և պասիվ արտաքին տնտեսական կապեր հասկացությունները: Ակտիվ կարող են կոչվել այն երկրների արտաքին տնտեսական կապերը, որոնք ներքաշված են միջազգային տնտեսական հարաբերություններում առավելապես սեփական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ներմուծման նկատմամբ արտահանման գերազանցման շնորհիվ, հակառակ դեպքում, երբ ներմուծումն է գերազանցում արտահանմանը, խոսք կարող է գնալ պասիվ արտաքին տնտեսական կապերի մասին: Ակտիվ տնտեսական կապերի դեպքում երկրներին հաջողվում է ապահովվել դրական առևտրային հաշվեկշիռ, հետևաբար թուլանում է կախվածությունը միջազգային արժութավարկային կազմակերպություններից և առաջատար պետություններից, նվազում է երկրի պարտքային բեռը: Տնտեսական կապերի միջազգայնացման համատեքստում անցումային և զարգացող երկրների համար բնական ռեսուրսների առկայությունը խիստ կարևորվում է: Այն, մի կողմից, մեծ առավելություն է կառուցվածքային վերափոխումների իրականացման ժամանակ, և

բավականին գրավիչ արտասահմանյան ներդրումների համար, իսկ մյուս կողմից՝ ինչպես ցույց է տալիս բնական ռեսուրսներով հարուստ մի շարք երկրների փորձը (Թուրքմենստան, Ռուսաստան), դրանց առկայությունը թույլ է տալիս քաղաքական անկայունության պայմաններում խիստ թուլացնել տնտեսական բարեփոխումների իրականացման նկատմամբ վերահսկողությունը, որն էլ, որպես կանոն, վերջին հաշվով հանգեցնում է քաղաքական վերնախավի կոռումպացմանը:

Արտաքին տնտեսական կապերի ամրապնդման և ընդլայնման հարաբերականորեն ինքնուրույն գործոն կարելի է համարել աշխարհաքաղաքական գործոնը, եթե՝

- երկիրը գտնվում է տնտեսապես առավել զարգացած երկրների հարևանությամբ,
- տարածաշրջանում բացակայում են ռազմական ընդհարումները,
- երկրի տարածքով անցնում են միջազգային նշանակության հաղորդակցման ուղիները:

Ցավոք, նշված գործոններից և ոչ մեկը չի համապատասխանում Հայաստանի տնտեսական իրողություններին:

Վերջապես, արտաքին տնտեսական կապերի ամրապնդման և ընդլայնման գործում, մեծապես կարևորվում է ազգամշակութային գործոնը, որի ազդեցությունը պայմանավորված է տվյալ երկրի սովորույթներով, ազգային հոգեբանության և առանձնահատկություններով: Տնտեսական կապերի ազատականացման պայմաններում յուրաքանչյուր երկրի արտաքին տնտեսական կապերում ընդգրկվածությունը գնահատվում է առևտրային հարաբերություններին, կապիտալի և աշխատուժի, որպես արտադրության գործոնների միջազգային շուկաներին մասնակցությամբ, տեխնոլոգիների համաշխարհային շուկայում ունեցած դերակատարումով և այդ ամենի արդյունքում գրանցած տնտեսական առաջընթացով: Այլ խոսքով, ժամանակակից համաշխարհային տնտեսության բազմաբնույթ կապերին ակտիվ մասնակցությունը ոչ այլ ինչ է, քան արտաքին տնտեսական կապերի բազմազանեցում:

ՀՀ առևտրատնտեսական կապերի աշխարհագրության, հիմնական առևտրային գործընկերների հետ արտահանման և ներմուծման դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, անշուշտ, համաշխարհային ճգնաժամը բացասաբար է անրադառնում ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Սակայն, ըստ էության, տնտեսական զարգացման արտաքին և ներքին գործոնների միասնականության և փոխկախվածության հանգամանքն է, որով կարևորվում է ներքին գործոնների դերը, որոնք ապահովում են հայրենական ապրանքների մրցունակությունը արտաքին շուկաներում: Այսպես, եթե 2005 թ. ՀՀ արտահանումը կազմում էր ներմուծման 53.7%-ը, ապա 2014 թվականին այն կազմել է 34.9%: Այսինքն, արտահանումը՝ որպես տնտեսական աճի գործոնի իր գործառույթը չի իրականացնում, քանի որ արտահանումից ստացվող եկամուտները բավարարում են միայն ներմուծման ծախսերի միայն 1/3-ից ավելիի փոխհատուցմանը: Վերջին տարիներին բավականին նվազել են նաև տնտեսական աճի տեմպերը, ինչի արդյունքում ըստ արտահանման բաժնեմասի տնտեսության բացության մակարդակը 2005 թ. 19.4%-ից նվազել և վերջին չորս տարիների ընթացքում պահպանվում է 13.2% մակարդակի վրա: Եթե ներմուծման ծավալները շարունակ աճում են, կնշանակի ներքին շուկայում առկա է որոշակի ապրանքների նկատմամբ կայուն պահանջարկ, որը հնարավոր է բավարարել նաև տեղական արտադրությամբ՝ գործընկեր երկրների հետ ձևավորելով արդյունավետ և փոխշահավետ արտաքին առևտրային հարաբերություններ: Այսպես, եթե ՀՀ առևտրային 20 հիմնական գործընկերներին 2008 թ.-ին բաժին էր

ընկնում ՀՀ ներմուծման 67.8%-ը, ապա 2013 թ.-ին այդ ցուցանիշը հասել էր 81.9%-ի Միաժամանակ 2009-2015 թթ. որոշակի փոփոխություններ են կատարվել գործընկեր երկրների կազմում (գծապատկերներ 1 և 2): Ներքին անբավարար կապիտալ ռեսուրսների պարագայում յուրաքանչյուր երկրի առջև ծառանում է նաև կապիտալի համաշխարհային շուկայի անընդհատ սրվող մրցակցության պայմաններում օտարերկրյա կապիտալի ներգրավվման և դրանց արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը: Սակայն օտարերկրյա կապիտալ ներդրումների ներկա ծավալները բավարար չեն ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացված կառուցվածք ձևավորելու, տնտեսական հետամնացությունը հաղթահարելու, համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխան մրցունակ ապրանքներ արտահանելու, արտահանման խթանման ճանապարհով մնացած երկրների նկատմամբ փողային պարտավորություններն իրականացնելու և վճարային հաշվեկշռի վիճակը բարելավելու առումով:



Գծապատկեր 1. ՀՀ արտահանումը ԵՄ, ԱՊՀ, ՌԴ և այլ երկրներ 2005 և 2009-2015թթ. (մլն.ԱՄՆ դոլար)[2]



Գծապատկեր 2. ՀՀ ներմուծումը ԵՄ, ԱՊՀ, ՌԴ և այլ երկրներից 2005 և 2009-2015թթ. (մլն.ԱՄՆ դոլար)[3]

[2]Գծապատկերը կազմվել է «ՀՀարտաքին առևտուրը 2002-2005թթ.» և «Հայաստանի վիճակագարական տարեգիրք 2013», Երևան, 2013, էջ 478-480 և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին», էջ 115-166 վիճակագրական տեղեկագրերի տվյալների հիման վրա:

ՀՀ տնտեսությունը օտարերկրյա ներդրողների համար գրավիչ չէ, ուստի վերոհիշյալ հիմնախնդիրների անհետաձգելիությունից ելնելով առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիր է դառնում մեր երկրի ներդրումային գրավչության բարձրացումը, ՕՈՒՆ-ի ներգրավման այնպիսի մեխանիզմների ձևավորումը, որոնք ՀՀ մրցակցային միջավայրին կտան նոր որակ, կթուլացնեն այնպիսի խոչնդոտների նշանակությունը, ինչպիսիք են քաղաքական անկայունությունը, նեղ սպառողական շուկան, տրանսպորտային բարձր ծախսերը և այլն:

2006-2013 թթ. ՀՀ ներհոսած օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2009 թ.-ը բոլոր առումներով եղել է կրիտիկական, ինչը բնական է և օրինաչափ ոչ միայն մեր երկրի տնտեսական այս կամ այն ոլորտների, այլև ամբողջ համաշխարհային տնտեսության համար: Հենց այդ թվականին տնտեսական աննախադեպ անկումը կանխելու նպատակով ներգրավվեց 906.2 մլն դոլար, որի արդյունքում նույն թվականին գրանցվեց ընդհանուր ներդրումների ամենամեծ՝ 2555.4 մլն ԱՄՆ դոլար ծավալը: 2009 թ.-ի բարձր մակարդակը հաջորդ տարիներին չի պահպանվել, որոշակի առաջընթաց գրանցվել է 2011 և 2013 թթ.-ին: 2013թ.-ին ՀՀ ներհոսած ներդրումների ընդհանուր ծավալը հասել է 2008թ.-ի՝ նախաճգնաժամային մակարդակին, սակայն ՕՈՒՆ-ի տեսակարար կշիռը նախորդ տարիների համեմատությամբ բավականին ցածր է, այն դեպքում, երբ աննախադեպ՝ 351.6 անգամ աճել են օտարերկրյա պորտֆելային ներդրումները: Դա կարելի է համարել ՀՀ ներդրումային քաղաքականության նորագույն գիծը:

2014 թ. ՀՀ ներհոսած օտարերկրյա ներդրումները 2013 թ. համեմատությամբ նվազել են 138.4 մլն դոլարով և կազմել 851.8 մլն դոլար: Օտարերկրյա ուղղակի ներդրումներն աճել են 12.6 մլն դոլարով և կազմել 382.8 մլն դոլար[4]:

ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հանձնաժողովն առաջարկում է բանաձև, որի միջոցով գնահատվում է երկու երկրների միջև ՕՈՒՆ-երի իրականացման ինտենսիվությունը: Բանաձևն ունի հետևյալ արտահայտությունը՝

FDI intensity ratio (R) = $\mathbf{FDI_{ij}/ExpFDI_{ij}}$, որտեղ՝

FDI_{ij}-ն i-րդ երկրի կողմից j-րդ երկրում իրականացված ՕՈՒՆ ընդհանուր ծավալն է,

$ExpFDI_{ij}$-ն՝ i-րդ երկրի կողմից j-րդ երկրում իրականացվող ՕՈՒՆ ակնկալվող ծավալն է: Ընդ որում, եթե R>1, ապա դոնոր և ռեցիպիենտ երկրների միջև կապն ամուր է, իսկ հակառակ դեպքում՝ երբ R<1, ապա առկա է թույլ կապ:

Ըստ հեղինակի կողմից կատարված հաշվարկների, 2012 թ.-ին ՀՀ-ում Ռուսաստանի կատարած ՕՈՒՆ-երի՝ FDI intensity ratio (R)>1-ից, ինչը նշանակում է, որ Ռուսաստան-Հայաստան ներդրումային հարաբերությունները բավականին ինտենսիվ են:

Վերջին տարիներին համաշխարհային տնտեսության կոնյունկտուրային փոփոխությունների, ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարման ուղղությամբ երկրների անարդյունավետ ջանքերի արդյունքում ներդրումային միջոցների

---

[3] Գծապատկերը կազմվել է «ՀՀարտաքին առևտուրը 2002-2005թթ.» և «Հայաստանի վիճակագարական տարեգիրք 2013», Երևան, 2013, էջ 478-480 և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին», էջ 115-166 վիճակագրական տեղեկագրերի տվյալների հիման վրա:

[4] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական ժողովածու, էջ 81:

սղությունը, կարծես թե, առաջին պլան է մղել օտարերկրյա դրամական փոխանցումների, որպես տնտեսական աճի արտաքին գործոնի նշանակությունը: ՀՀ տնտեսության համար դրամական փոխանցումները արտաքին աշխարհից արժույթի ներգրավման չափազանց կարևոր աղբյուր են: Օտարերկրյա դրամական փոխանցումները գերազանցում են արտահանումից ստացող եկամուտները 38%-ով, բանկային հոսքերը՝ 8 անգամ, ՕՈՒՆ-ները՝ 2 անգամ և պաշտոնական կառավարական հոսքերը՝ 4 անգամ: ՀՀ ներմուծման շուրջ 40%-ը ֆինանսավորվում է դրամական փոխանցումների միջոցով: Պատահական չէ, որ ՀՀ-ը ընդգրկված է դրամական փոխանցումներ ստացող աշխարհի 15 առաջատարների շարքում: Այնուհանդերձ դրամական փոխանցումների դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2006թ.-ի վերջերից դրանց ներհոսքի ծավալներն աստիճանաբար նվազել են, իսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին գրանցվել է դրանց ծավալների աննախադեպ անկում: Եվ չնայած 2009թ. վերջերից դրամական փոխանցումների ներհոսքը կրկին ցուցադրել է աճի միտում, սակայն նախաճգնաժամային բարձր մակարդակին այդպես էլ հնարավոր չի եղել հասնել:

Որպես կանոն դրամական փոխանցումների և ՀՀ-ից աշխատուժի միգրացիայի միջև առկա է սերտ կոռելյացիա, սակայն դրամական փոխանցումների ծավալների վրա ազդում են նաև էգզոգեն գործոնները, տվյալ պարագայում հեղինակը նկատի ունի փոխանցումներ անող դոնոր երկրների տնտեսական վիճակը: Եթե դրամական փոխանցումների ծավալում որևէ դոնոր երկիր ունի ակնհայտ բարձր տեսակարար կշիռ, ապա այդ երկրի տնտեսությունում տեղի ունեցող տնտեսության իրավիճակային փոփոխությունները բնականաբար կարտացոլվեն նաև երկիր ներհոսած փոխանցումների դինամիկայում և ծավալում: Այդ կախվածությունը դրամական փոխանցումների, որպես կայուն դրամական հոսքերի աղբյուրի խնդիրը դնում է կասկածի տակ, ավելին՝ այստեղ ևս ռիսկի գործոնը դառնում է առաջնային: Եթե ՕՈՒՆ-ների արդյունավետությունը մեծապես կախված է ընդունող երկրի տնտեսական իրավիճակից, ապա միակողմանի մասնավոր դրամական փոխանցումների արդյունավետությունը կախված է թե՛ դոնոր և՛ թե ռեցիպիենտ երկրների տնտեսական իրավիճակից:

Ելնելով բերված տեսական մոտեցումների փաստարկման նկատառումներից, նշվել է, որ ՀՀ ներհոսած դրամական փոխանցումների ծավալում, միայն մեկ երկրի՝ Ռուսաստանի Դաշնության բաժինը 2005 թ. 71.9%-ից 2013 թ.-ին կազմել է 85.9%: 2007-2009 թթ. դրամական փոխանցումների կտրուկ անկումը պայմանավորված է նաև նրանով, որ լինելով զարգացման միևնույն մակարդակի վրա գտնվող երկրներ՝ Ռուսաստանում և Հայաստանում տնտեսական ճգնաժամի հետևանքները պետք է նույնական լինեին, ինչն օրինակ, զարգացած երկու երկրների փոխադարձ տնտեսական կապերում նույնքան ցայտուն չի դրսևորվում:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, արտահանման բազմազանեցման գործընթացներին մասնակցում են տնտեսական գործունեության բոլոր սուբյեկտները՝ սկսած մանր ու միջին բիզնեսից մինչև վերազգային կորպորացիաներ: Բազմազանեցման գործընթացը բազմամակարդակ է, որը իրականացվում է միկրոմակարդակում (իշխանության տեղական մարմիններ), մեզոմակրդակում (առանձին տարածքներ, տարածաշրջաններ) և մակրոմակարդակում (պետական մակարդակով), ինչպես նաև երկրների միջպետական համագործակցության շրջանակներում, այդ թվում մերձսահմանային: Իրենց արդյունավետությամբ և արդյունքատվությամբ նշված

մակարդակներից յուրաքանչյուրի դերը արտահանման բազմազանեցման գործում, կախված է կոնկրետ երկրից:

ՀՀ արտահանման բազմազանեցման համար առանձնահատուկ նշանակություն պետք է տրվի մեզոմակարդակին, այսինքն տարածքներին: Այդպիսի տարածքներ հանդիսանում են մարզերը: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ ՀՀ մարզերը ներկայումս ունեն տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ, ինչն էլ էական ազդեցություն է թողնում տնտեսական առաջընթացի ընդհանուր իրավիճակի, մարզերի բնակչության եկամուտների անհավասարության և, վերջին հաշվով, ներդրումային հնարավորությունների ձևավորման վրա: Մերձսահմանային համագործակցության ուղղությամբ ՀՀ-ն որևէ քայլ չի կատարել: Սակայն այդ ուղղությամբ համապատասխան երկարաժամկետ ռազմավարության մշակումը և պետական աջակցությամբ մերձսահմանային տնտեսական համագործակցության արմատավորումը, հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները, ազգային շահերը հնարավոր կլինի մեր և հարևան երկրների, իսկ ավելի կոնկրետ Վրաստանի և ԻԻՀ տնտեսական ներուժի համատեղ օգտագործման ճանապարհով ստեղծել թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաների պահանջարկը բավարարող ապրանքների լայն տեսականու արտադրություններ:

Ատենախոսության երրորդ՝ ***«ՀՀ առևտրատնտեսական կապերի բազմազանեցման ուղիները»*** գլխում տնտեսաչափական մոդելների միջոցով գնահատվել է ՀՀ արտաքին տնտեսական կապերի փոխազդեցությունը, որոշակիացվել են այն մարտահրավերները, որոնք ծառացած են ՀՀ տնտեսության առջև, տրվել է նաև ՀՀ արտահանման համեմատական արդյունավետության գնահատականը:

Տնտեսաչափական մոդելների հիման վրա ՀՀ արտաքին տնտեսական կապերի՝ արտահանում, ներմուծում, օտարերկրյա ներդրումներ և դրամական փոխանցումներ, փոխազդեցության հետազոտության համար հիմք են հանդիսացել 2005-2015 թթ.-ին՝ ՀՆԱ-ի, արտահանման, ներմուծման, օտարերկրյա կապիտալ ներդրումների և միակողմանի մասնավոր դրամական փոխանցումների եռամսյակային կտրվածքով վիճակագրական տվյալները, որոնք տրամադրվել են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

Ուսումնասիրվող փոփոխականների համար նախ դիտարկվել են փոփոխականների միջև կորելացիոն կապերը (Տես՝ աղյուսակ 1): Ակնհայտ է, որ առկա է բավականին բարձր կորելացիոն կախվածություն ՀՆԱ-ի, արտահանման, ներմուծման և դրամական փոխանցումների միջև, ներմուծման, արտահանման և դրամական փոխանցումների միջև, դրամական փոխանցումների և արտահանման միջև: Ինչ վերաբերում է ներդրումներին, ապա այստեղ առկա է որոշակի դրական կախվածություն ՀՆԱ-ի և դրամական փոխանցումների միջև: ՀՀ արտաքին տնտեսական կապերի փոխազդեցությունը գնահատելու նպատակով գնահատվել է ռեգրեսիոն մոդել՝ փոքրագույն քառակուսիների մեթոդով: Այս մեթոդն ընտրվել է, քանի որ ազդող փոփոխականները դիտարկված են ոչ թե միևնույն ժամանակահատվածով, այլ համապատասխան նախորդ լագերով: Ավտոկոռելյացիայի առկայությունը թուլանում է հենց վերջին հանգամանքով, որը նաև որոշակի բացատրություն ստացել է էկոնոմետրիկայի ոլորտի համապատասխան աշխատություններում և հետազոտություններում:

Աղյուսակ 1

ՀՆԱ-ի և ՀՀ արտաքին տնտեսական կապերի կոռելացիան

	EXPORT	GDP	IMPORT	INVESTMENT	TRANSFERT
EXPORT	1.000000	0.713075	0.794939	-0.110451	0.668278
GDP	0.713075	1.000000	0.862492	0.319676	0.792409
IMPORT	0.794939	0.862492	1.000000	0.294728	0.872229
INVESTMENT	-0.110451	0.319676	0.294728	1.000000	0.386316
TRANSFERT	0.668278	0.792409	0.872229	0.386316	1.000000

Մոդելում Դուրբին-Վաթսոնի վիճակագրականը հավասար է 1.47-ի, ինչը թույլ է տալիս ենթադրել ավտոկոռելյացիայի թույլ լինելու մասին: Մինչդեռ R^2-ին հավասար է 0.74-ի, իսկ բացատրող փոփոխականների համապատասխան t վիճակագրականները նշանակալի են (Մոդել 1):

Մոդել 1

GDP = 1.87*EXPORT - 0.96*IMPORT(-2) + 2.26*INVESTMENT(-3) + 7.5*TRANSFERT(-4) + 644.81 (1)

[2.03] [4.22] [-3.91] [3.2] [4.93]

որտեղ՝ GDP-ին ՀՆԱ-ն է,
Exsport-ը արտահանումն է,
Import-ը ներմուծումն է,
Transfert-ը դրամական փոխանցումներն են,

Մոդելը ցույց է տալիս, որ բացի ներմուծումից, մնացած փոփոխականները ՀՆԱ-ի վրա ունեն դրական ազդեցություն, ինչն օրինաչափ է: Եթե ներմուծումը ազդում է ՀՆԱ-ի վրա 2 եռամսյակ հետո և այդ ազդեցությունը բացասական է, ապա ներդրումները ազդում են 3 եռամսյակ հետո, իսկ դրամական փոխանցումների ազդեցությունը զգալի է դառնում մեկ տարի անց: Սակայն դրամական փոխանցումների ազդեցությունն ավելի նշանակալի է քան արտահանման ազդեցությունն է:

Դրամական փոխանցումներն իրենցից ներկայացնում են աշխատուժի արտահանումից ստացված եկամուտներ, ուստի տեղին է հիշատակել, որ համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատականների՝ եթե ապրանքների արտահանման դեպքում շահույթի միջին նորմը կազմում է 20%, ծառայությունների դեպքում՝ 50%, ապա աշխատուժի արտահանման եկամտաբերությունն անցնում է 100% -ից[5]:

Այնուհետև գնահատվել են վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելներ (VAR): VAR մոդելի կայունության պայմանը ստուգվել է միավոր արմատի թեստի միջոցով, ինչն էլ ցույց է տալիս, որ մեր կողմից դիտարկված բոլոր VAR-երը բավարարում են կայունության

[5] Զ. Ա. Թադևոսյան, Դ. Ռ. Գալոյան «Միջազգային տնտեսագիտություն. տեսություն և քաղաքականություն»: Ուսումնական ձեռնարկ: Հեղինակային հրատարակություն: Երևան 2015, էջ 367:

պայմանին, քանի որ բնութագրիչ հավասարումների արմատները իրենց բացարձակ արժեքով փոքր են 1-ից:

Մոդել 2-ում դիտարկվել է արտահանման և ներմուծման դինամիկ կապը 1 լագային կտրվածքով, որտեղ որպես գործիքային փոփոխական դիտարկել ենք դրամական փոխանցումները: (2) և (3) հավասարումներում R^2-ները բավականին մեծ են, իսկ ինչ վերաբերում է t վիճակագրականներին, ապա բացառությամբ (3) բանաձևի արտահանման ցուցանիշի՝ մյուսները նշանակալի են: Արդյունքները ներկայացված են հավելված 3-ում:

Մոդել 2

EXPORT = 0.86*EXPORT(-1) - 0.22*IMPORT(-1) + 138.88 + 1.07*TRANSFERT, R^2=0.7 (2)
IMPORT = 0.02*EXPORT(-1) + 0.3*IMPORT(-1) + 60.66+ 3.79*TRANSFERT, R^2=0.8 (3)

Ընթացիկ կամ տվյալ ժամանակահատվածում՝ 1 եռամսյակ առաջ կատարված արտահանումը կարելի գնահատել այսպես. նախորդ եռամսյակում մեկ միավոր արտահանման աճը հանգեցնում է ընթացիկ ժամանակահատվածում արտահանման 0.86 միավոր աճին: Ներմուծումը, բնական է, ունի բացասական ազդեցություն: Մեր մոդելում, նախորդ եռամսյակում մեկ միավոր ներմուծման աճը հանգեցնում է արտահանման 0.22 միավոր անկմանը: Դրամական փոխանցումների ազդեցությունը նշանակալի է և դրական. տվյալ ժամանակաշրջանի դրամական փոխանցումները՝ տվյալ ժամանակաշրջանի արտահանումն ավելացնում են 1.07 միավորի չափով:

Տվյալ ժամանակաշրջանի ներմուծման վրա նախորդ ժամանակաշրջանի արտահանումը չունի նշանակալի ազդեցություն, ինչը կարող ենք բացատրել մակրոտնտեսական հայտնի այն պոստուլատի հիման վրա, որ արտահանումը, ինչպես և ներդրումները համարվում է էկզոգեն փոփոխական, որը կախված չէ տվյալ երկրում եկամտի ծավալից և կախված է այդ երկրի արտադրանքի նկատմամբ այլ երկրների պահանջարկից: Ուստի ներդրումների մակարդակի և արտահանման մակարդակի ցանկացած փոփոխություն տեղի է ունենում եկամտից ավտոնոմ, անկախ:

Նախորդ ժամանակաշրջանի ներմուծումը և տվյալ ժամանակաշրջանի դրամական փոխանցումները ներմուծման վրա ունեն դրական ազդեցություն, իհարկե դրամական փոխանցումների նշանակալի ազդեցության փաստն ակնհայտ է: Կարող ենք եզրակացնել, որ ՀՀ տնտեսությունում արտահանման և ներմուծման միջև առկա է որոշակի դինամիկ փոխազդեցություն՝ 1 լագ կտրվածքով:

VAR մոդելի հետագա վերլուծության համար կառուցվել են ակնթարթային արձագանքի ֆունկցիաները, և կատարվել է ակնթարթային արձագանքի վերլուծություն: Ակնթարթային արձագանքի վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպես է յուրաքանչյուր էնդոգեն փոփոխական արձագանքում հենց այդ փոփոխականի և մյուս էնդոգեն փոփոխականների ցնցումներին:

Մոդել 3-ում ներդրումներն են դիտարկվել որպես գործիքային փոփոխական, իսկ արտահանման և ներմուծման համար կրկին կիրառվել է 1 լագային կտրվածքը: Մոդելը ներկայացված է (4) և (5) հավասարումների միջոցով: Ակնհայտ է, որ (4) հավասարման մեջ փոփոխականները նշանակալի են, բացառությամբ ներդրումների, ինչը կարելի է բացատրել տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների գլխավորապես դեպի առևտրի և ծառայությունների ոլորտն ուղղվածությամբ: Այսինքն դրանք չեն ուղղվում իրական տնտեսություն, և, հետևաբար չեն հանգեցնում ապրանքների արտահանման ծավալների աճին: Նշված եզրահանգումը հաստատվում է (5)-րդ հավասարման միջոցով, որը

փաստում է, որ ներդրումների ծավալների ավելացմանը զուգահեռ ներմուծման ծավալներն ավելանում են, կամ 1 միավորով ներդրումների աճը հանգեցնում է 1.13 միավորով ներմուծման աճին:

Երրորդ գնահատված մոդելն ունի հետևյալ տեսքը, համապատասխանաբար՝ $R^{2=}0.64$ և $R^{2=}0.65$:

Մոդել 3

$$EXPORT = 1.06*EXPORT(-1) - 0.23*IMPORT(-1) + 203.65 + 0.15*INVESTMENT,\ R^{2=}0.64 \quad (4)$$
$$IMPORT = 0.93*EXPORT(-1) + 0.17*IMPORT(-1) + 222.45 + 1.13*INVESTMENT,\ R^{2=}0.65 \quad (5)$$

Արտահանման և ներմուծման ցնցումների փոխազդեցությունը, այն դեպքում երբ ներդրումները դիտարկված են որպես գործիքային փոփոխականներ, նույնպես գնահատվել է:

Չորրորդ գնահատված մոդելն ունի հետևյալ տեսքը, համապատասխանաբար՝ $R^{2=}0.7$, $R^{2=}0.83$ և $R^{2=}0.53$:

Մոդել 4

$$EXPORT = 0.70*EXPORT(-1) - 0.11*IMPORT(-1) - 0.36*INVESTMENT(-1) + 153.43 + 1.09*TRANSFERT \quad (6)$$
$$IMPORT = -\ 0.15*EXPORT(-1) + 0.42*IMPORT(-1) - 0.39*INVESTMENT(-1) + 76.92 + 3.82*TRANSFERT \quad (7)$$
$$INVESTMENT = 0.59*EXPORT(-1) + 0.22*IMPORT(-1) - 0.17*INVESTMENT(-1) + 19.64 + 1.36*TRANSFERT \quad (8)$$

Վեկտորական ավտոռեգրեսիայի պարամետրերի գնահատման արդյունքները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Վեկտորական ավտոռեգրեսիայի գնահատականները

-	EXPORT	IMPORT	INVESTMENT
գործակից/ EXPORT(-1)	0.703964	-0.150703	-0.592064
սխալի գնահատական	(0.18713)	(0.21854)	(0.11613)
t-վիճակագրական	**[3.76197]**	**[-0.68958]**	**[-5.09833]**
գործակից/ IMPORT(-1)	-0.112963	0.424163	0.215089
սխալի գնահատական	(0.11707)	(0.13673)	(0.07265)
t-վիճակագրական	**[-0.96490]**	**[3.10226]**	**[2.96047]**
գործակից/ INVESTMENT(-1)	-0.356043	-0.397802	-0.171854
սխալի գնահատական	(0.23785)	(0.27779)	(0.14761)
t-վիճակագրական	**[-1.49691]**	**[-1.43205]**	**[-1.16425]**
TRANSFERT	1.095894	3.823452	1.356574
սխալի գնահատական	(0.41590)	(0.48572)	(0.25810)
t-վիճակագրական	**[2.63502]**	**[7.87170]**	**[5.25596]**
հաստատուն/C	153.4321	76.92254	19.64427
սխալի գնահատական	(70.5188)	(82.3581)	(43.7634)
t-վիճակագրական	**[2.17576]**	**[0.93400]**	**[0.44887]**

Վերջում կառուցվել է միջազգային փոխանցումների և արտահանման VAR-մոդելը, համապատասխանաբար $R^{2=}0.62$ և $R^{2=}0.73$:

Մոդել 5

TRANSFERT = - 0.00*TRANSFERT(-1) + 0.70*TRANSFERT(-2) + 0.38*EXPORT(-1) - 0.36*EXPORT(-2) + 44.05 (9)

EXPORT = - 1.75*TRANSFERT(-1) + 1.16*TRANSFERT(-2) + 1.21*EXPORT(-1) - 0.31*EXPORT(-2) + 174.97 (10)

Վեկտորական ավտոռեգրեսիայի պարամետրերի գնահատման արդյունքները ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Արտաքին տնտեսական գործունեության բազմազանեցման թերևս առավել կարևոր ոլորտը արտաքին առևտրային կամ արտահանման ապրանքային կառուցվածքի և աշխարհագրության բազմազանեցումն է: Արտահանման ապրանքային կառուցվածքի ուսումնասիրության, դրա բազմազանեցման հնարավորությունների բացահայտման նպատակով ուսումնասիրվել է ՀՀ արտահանման համեմատական արդյունավետությունը 2014 թ.-ին՝ հիմք ընդունելով արտահանման համեմատական մասնագիտացման գործակիցը (ԱՀՄԳ): Արտահանման համեմատական մասնագիտացման գործակցի հաշվակման համար օգտագործվել են ՀՀ և համաշխարհային արտահանման քառանիշ դասակարգմամբ ներկայացված ապրանքախմբերը: Կատարված հաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ 72 անուն ապրանքախմբերից 13-ը ունեն 1-ից փոքր ԱՀՄԳ, այսինքն, կարելի է պնդել, որ դրանց արտահանման ներուժը փոքր է: Մնացած 59 անուն ապրանքախմբերի ԱՀՄԳ-ն տատանվում է 1-343 միջակայքում: Ավելի հստակ պատկերացում կազմելու համար, թե համաշխարհային շուկայում ՀՀ արտահանման մրցունակությունը ո՞ր ապրանքների գծով է նշանակալի և արտահանման բազմազանեցման առումով ո՞ր ճյուղերն ունեն իրական ներուժ, ուսումնասիրվող ապրանքախմբերը դասակարգվել են ցածր (1-50), միջին (50-100) և բարձր (100 և ավելի) արտահանման համեմատական մասնագիտացման գործակից ունեցող խմբերում:

Աղյուսակ 3

Վեկտորական ավտոռեգրեսիայի գնահատականները

-	TRANSFERT	EXPORT
գործակից/ TRANSFERT(-1)	-0.000643	-1.749438
սխալի գնահատական	(0.13504)	(0.41944)
t-վիճակագրական	**[-0.00476]**	**[-4.17085]**
գործակից/ TRANSFERT(-2)	0.700722	1.160999
սխալի գնահատական	(0.16655)	(0.51735)
t-վիճակագրական	**[4.20715]**	**[2.24415]**
գործակից/ EXPORT(-1)	0.376122	1.214078
սխալի գնահատական	(0.05413)	(0.16814)
t-վիճակագրակա	**[6.94854]**	**[7.22085]**
գործակից/ EXPORT(-2)	-0.360508	-0.312171
սխալի գնահատական	(0.07238)	(0.22482)
t-վիճակագրական	**[-4.98083]**	**[-1.38853]**
հաստատուն/ C	44.04554	174.9700
սխալի գնահատական	(24.1959)	(75.1562)
t-վիճակագրական	**[1.82037]**	**[2.32808]**

Բարձր ԱՀՄԳ ունեն երեք խումբ ապրանքախմբեր՝ մոլիբդեն և ապրանքներ մոլիբդենից, ներառյալ մնացորդները և ջարդոնը (343.08), Էլեկտրաէներգիա (168.31) պղինձ չզտված, պղնձե անոդ էլեկտրական զտման համար (153.15):

Միջին մակարդակում, այսինքն 50-100 ԱՀՄԳ ունեցող ապրանքախմբերը ընդամենը յոթն են: Այդ խմբի մեջ ներառվում են չբնափոխված էթիլային սպիրտը, սպիրտի 80%-ից պակաս խտությամբ ըմպելիքները, լիկյորները և ալկոհոլային այլ խմիչքները (67.29) ծխախոտը և սիգարը (60.86), պղինձի հանքաքարը, խտանյութը (55.65), թանկարժեք մետաղի հանքաքարը, խտանյութը (67.74), ալյումինե փայլաթիթեղը 0,2մմ (89.15), ժամացույցի թափքը (ձեռքի և գրպանի), մասերը (60.88) և երկաթամիահալվածքը (51.82):

50 անուն մնացած ապրանքախմբերը՝ ունեն համեմատաբար ցածր արտահանման մասնագիտացման գործակից: Դրանց շարքում որոշ՝ օրինակ, ոչխարներ, այծեր (կենդանի), խմորման ենթարկված այլ ըմպելիք (խնձորի և տանձի գինի), ջրեր, բնական կամ արհեստական հանքային ջուր և ըմպելիք (առանց շաքարի), ցինկի հանքաքար, խտանյութ, մոլիբդենի հանքաքար, խտանյութ ապրանքախմբերը ունեն 20-ից բարձր ԱՀՄԳ:

Վերլուծությունները թույլ են տվել եզրակացնել, որ՝

1. Ընդհանուր առմամբ, ՀՀ արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն հանքահումքային ապրանքները:
2. Գյուղատնտեսական մթերքների մշակման հիմքի վրա զարգացող արտադրությունները համաշխարհային շուկայում բավականաչափ մրցունակ են:
3. Արտահանման համեմատական մասնագիտացման մեկից փոքր գործակիցներ ունեն այն ապրանքախմբերը, որոնք քիչ թե շատ տեխնոլոգիատար են: Դրանք են առանձին նյութերից բաղկացած դեղամիջոցները, ապրանքների փաթեթավորման և տեղափոխման համար պլաստմասսայե իրերը, պլաստմասսայից խողովակները, ճկախողովակները, կցամասերը, հեռախոսային և հեռագրային ապարատները, Էլեկտրական մեքենաները և հատուկ նշանակության ապարատները, Էլեկտրական կուտակիչը (ակումուլյատոր), հոսանքի անջատման, ընդհատման, պաշտպանության համար Էլեկտրական սարքերը և այլն:

ՀՀ արտահանման մեջ հումքային ապրանքների գերակշռությունը ծնում է մի շարք ոչ ցանկալի, բացասական հետևանքներ: Ամենից առաջ դա նշանակում է արտահանման տեխնոլոգիական մակարդակի նվազեցում, արագանում է չվերարտադրվող ռեսուրսների սպառումը, տնտեսության վրա մեծանում է էկոլոգիական բեռը, մեծանում է արտահանման կախվածությունը համաշխարհային հումքային շուկաների կոնյունկտուրայից, որն, ի դեպ, շատ անկայուն է:

Հաշվի առնելով այն, որ ներկայումս գոյություն չունի երկրի արտաքին տնտեսական ներուժի գնահատման ունիվերսալ կամ, առավել ևս համընդհանուր մեթոդաբանություն, հեղինակը նպատակահարմար է գտել կիրառել վիճակագրական ցուցանիշների համակարգ, դրանք են՝ արտահանման և ներմուծման աճի տեմպը, արտաքին առևտրային շրջանառության աճի տեմպը, արտահանման և ներմուծման բաժնեմասը, երկրի տնտեսական բացության գործակիցը, արտահանման ճկունության և միջազգային մրցունակության գործակիցները:

Ատենախոսության ***«Եզրակացություններ»*** բաժնում կատարված ուսումնասիրությունների, մշակված մոդելների և կատարված տնտեսաչափական

վերլուծությունների և հաշվարկների հիման վրա ամփոփվել են հետազոտության արդյունքում ստացված եզրակացություններն և առաջարկությունները:

Կատարված հիմնական ***եզրակացությունները*** հետևյալն են.

1. Տնտեսական կապերի ազատականացման պայմաններում յուրաքանչյուր երկրի արտաքին տնտեսական կապերում ընդգրկվածությունը գնահատվում է առևտրային հարաբերություններին, կապիտալի և աշխատուժի, որպես արտադրության գործոնների միջազգային շուկաներին մասնակցությամբ, տեխնոլոգիների համաշխարհային շուկայում ունեցած դերակատարումով և այդ ամենի արդյունքում գրանցած տնտեսական առաջընթացով: ՀՀ արտաքին տնտեսական կապերում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներկա ծավալները բավարար չեն ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացված կառուցվածք ձևավորելու, տնտեսական հետամնացությունը հաղթահարելու, համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխան մրցունակ ապրանքներ արտահանելու, արտահանման խթանման ճանապարհով մնացած երկրների նկատմամբ փողային պարտավորություններն իրականացնելու և վճարային հաշվեկշռի վիճակը բարելավելու առումով:

2. Որպես կանոն դրամական փոխանցումների և ՀՀ-ից աշխատուժի միգրացիայի միջև առկա է սերտ կորելյացիա, սակայն դրամական փոխանցումների ծավալների վրա ազդում են նաև էգզոգեն գործոնները, որոնցից առաջնայինը փոխանցումներ անող երկրների տնտեսական վիճակն է: Եթե դրամական փոխանցումների ծավալում որևէ դոնոր երկիր ունի ակնհայտ բարձր տեսակարար կշիռ, ապա այդ երկրի տնտեսությունում տեղի ունեցող տնտեսության իրավիճակային փոփոխությունները արտացոլվում են նաև երկիր ներհոսած փոխանցումների դինամիկայում և ծավալում: Այդ կախվածությունը դրամական փոխանցումների, որպես կայուն դրամական հոսքերի աղբյուրի խնդիրը դնում է կասկածի տակ, ավելին այստեղ ևս ռիսկի գործոնը դառնում է առաջնային:

3. Եթե ՕՈՒՆ-ների արդյունավետությունը մեծապես կախված է ընդունող երկրի տնտեսական իրավիճակից, ապա միակողմանի մասնավոր դրամական փոխանցումների արդյունավետությունը կախված է թե՛ դոնոր և՛ թե ռեցիպիենտ երկրների տնտեսական իրավիճակից: Եթե դոնոր երկիրը չի իրականացնում ժամանման երկրում միգրանտների իրավունքների հետևողական պաշտպանության, նրանց ընդունող երկրի հասարակությանն ինտեգրվելու ծրագրեր, ապա աշխատուժի, որպես արտադրության գործոնի արտահանումից ստացվող օգուտները նվազում են:

4. Տնտեսության ճգնաժամային վիճակը, նաև ֆինանսական ոլորտում պարբերական և գնալով բարդացող հիմնախնդիրները պայմանավորված են ՀՀ տնտեսության կառուցվածքային իրողություններով և հատկապես համաշխարհային տնտեսության գործընթացներում ընդգրկվելուն ուղված միջոցների ու մեխանիզմների բացակայությամբ, ինչպես նաև ռազմավարական նշանակության սխալներով: Համապատասխանաբար, կառուցվածքային վերափոխումների գործընթացը ենթադրում է ապրանքների ու ծառայությունների արտադրության ներքին կառուցվածքի կատարելագործում այն հաշվով, որ միջազգային շուկայում ապահովվի դրանց որոշ մասի մրցակցային առավելությունները:

5. ՀՀ արտաքին տնտեսական կապերի զարգացման՝ ժամանակակից համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխան ապրանքների և ծառայությունների արտադրությունը և արտահանման խթանումը բախվում է ներտնտեսական և արտաքին տնտեսական խոչընդոտների հետ: Եթե ներտնտեսական

խոչընդոտներն ունեն համակարգային բնույթ, որոնց հիմքում ընկած են շուկայի մենաշնորհեցումը, կոռուպցիան, տնտեսվարման բարենպաստ հարկային, վարկային, մեխանիզմների, պետական խելամիտ հովանավորչության անբավարարությունն ու բացակայությունը, ապա արտաքին խոչընդոտները երկատվում են ներքին և արտաքին պայմաններից բխողների: Արտաքին խոչընդոտներից ամենաազդեցիկը տրանսպորտային շրջափակումն է, էժան տրանսպորտային միջոցների հիման վրա արտաքին շուկաներ դուրս գալու հնարավորության բացակայությունը:

6. ՀՀ-ում խիստ սահմանափակ են ներքին աղբյուրների հաշվին մասնավոր ներդրումների իրականացման հնարավորությունները, պայմանավորված բնակչության խնայողությունների սահմանափակ հնարավորություններով, ցածր գնողունակ պահանջարկով: Մյուս հանգամանքը արտադրվող ապրանքների ցածր մրցունակությունն է, ինչպես նաև արտադրական կարողությունների ֆիզիզկական և բարոյական մաշվածքը, ինչպես նաև Հայաստանի գործարարների արտաքին շուկաներում աշխատելու փորձի և հմտությունների պակասը:

7. Որպես կանոն զարգացող երկրներում ՕՈՒՆ-երը հոսում են այն ոլորտներ, որտեղ առկա է ներդրված կապիտալի արագ հատույցի հնարավորություն, ինչը տանում է տնտեսության միակողմանի զարգացմանը, քանի որ ավելի երկարաժամկետում շահ ապահովվող ոլորտները, դուրս են մնում օտարերկրյա ներդրողների հետաքրքրությունների շրջանակից: ՀՀ արտադրական կարողությունները նորացնող և անմիջականորեն լրացնող ուղղակի ներդրումները կուտակված օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալում ունեն ցածր տեսակարար կշիռ: Դա էլ իր հերթին է վկայում ՀՀ ներմուծման փոխարինման ոչ բավարար ներուժային հնարավորությունների մասին:

Այդ կապակցությամբ արվել են մի շարք առաջարկություններ, որոնցում առաջնային նշանակություն է տրվել վերոհիշյալ հիմնախնդիրների լուծմանը: Դրանք են՝

1. Հեռանկարային ճյուղերի համեմատաբար արագ զարգացումը խթանելու նպատակով՝ օգտագործելով միջազգային փորձը և զարգացող տնտեսությամբ երկրների զարգացման միտումները՝ գործնական հաջողություններ կարելի է գրանցել ընթանալով հետևյալ տրամաբանական քայլերով. արտահանման ներուժի գնահատում, ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացում և դրա միջոցով առևտրային հաշվեկշռի դեֆիցիտի նվազեցում, բարենպաստ կառուցվածքային էֆեկտ:

2. Հետևողական և արդյունավետ ներմուծման փոխարինման քաղաքականությունը, որն անհրաժեշտ է որոշակի ժամանակաշրջանում տնտեսական ակտիվության աճի, մակրոտնտեսական բարենպաստ միջավայրի և արտահանման հնարավորությունների ձևավորման համար, հնարավոր է իրականացնել՝ ա) իրատեսորեն մշակված արդյունաբերական քաղաքականության պայմաններում, որտեղ հստակ ընդգծված են արտաքին տնտեսական մասնագիտացման ուղղությունները, բ) արտադրողների և սպառողների հիմնավորված շահերը պաշտպանող տնտեսական մեխանիզմների առկայության դեպքում:

3. Արտահանմանն ուղղված կառուցվածքային առաջնահերթությունների խրախուսմանն ուղղված միջոցառումները կարող են լինել՝

- Հարկման ճկուն համակարգը, որը նպատակաուղղված է ինովացիոն ծրագրերի համար նախատեսված միջոցների ձևավորմանը: Կարևորվում է վենչուրային (ռիսկային) ընկերությունների հաջող գործունեություն ծավալելու իրավական դաշտի

ձևավորումը, ընկերություններ որոնք մասնագիտանում են նորամուծական ծրագրերի և նախագծերի, ինչպես նաև տեխնոլոգիական նորամուծությունների ֆինանսավորման հարցերում:

- Արտասահմանյան ներդրողների հետ տնտեսական կապեր հաստատելիս կարևորվում են երկարաժամկետ ուղղակի ներդրումների (կապիտալատար աշխատանքներ, արտադրական, գիտատեխնիկական և կառավարչական ծառայություններ) տարբեր համակցումները: Այդպիսի մոտեցումը թույլ է տալիս արդյունավետ օգտագործել երկրի տնտեսական ռեսուրսները:
- Արտահանվող արդյունքների (համապատասխան պետության կողմից մշակված առաջնահերթությունների) արտադրությունը խթանելու համար, հարկ է օգտագործել դրա համար նախատեսված ողջ զինանոցը՝ պետական սուբսիդիաներն ու դոտացիաները, արտոնությունները, վարկավորումը (պարտադիր-վերադարձելի): Պետությունը կարող է դառնալ ՀՀ-ում արտասահմանյան կապիտալով գործառնող այն բանկերին երաշխավորը, որոնք վարկավորում են արտահանմանն ուղված արտադրությունները:

4. Արտաքին առևտրային կապերի ամրապնդման և զարգացման համար անհրաժեշտ է զարգացնել մրցունակ արտադրությունները, որոնք տնտեսության բազային ոլորտներն են՝ մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, սարքաշինությունը և այլն: Պետության առաջնային խնդիրներից պետք է լինի այնպիսի արդյունավետ կառույցի ստեղծումը, որը կկարողանա առաջիկա հինգ-տաս տարիների համար կատարել գիտականորեն հիմնավորված և արժանահավատ կանխատեսումներ: Այս մարմինը պետք է համագործակցի գիտական ու հասարակական տարբեր կառույցների հետ և օժանդակի գործնական բնույթի մշակումների և առաջարկությունների ներդրմանը: Դա ի վերջո կհանգեցնի գիտության և արտադրության անմիջական կապի վերականգնմանը, որը նաև օգտակար կլինի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների անմիջական գիտական մշակումներում մասնակցության և բանիմաց որակյալ կադրերի պատրաստման առումով:

5. Ներմուծման փոխարինմանն ուղղված ներդրումային քաղաքականությունն առանձնակի տարբերակում չպետք է դնի կապիտալի ծագման՝ օտարերկրյա կամ տեղական լինելու միջև: Ընդհանուր առմամբ, այդ քաղաքականության միջոցառումների համախումբ կարող է իրականացվել այսպես՝

ա) տեղական հումքի հիման վրա ներմուծումը փոխարինող նոր արտադրությունների ստեղծում և արտահանում,

բ) նոր տեխնոլոգիաների ներդրմամբ և ներմուծվող հումքի բազայի հիման վրա ներմուծման փոխարինում, որը պետք է ունենա հստակ նպատակային ռազմավարություն, և հիմնված լինի արտահանման կառուցվածքային նորացման և համեմատական առավելությունների վրա,

գ) տեղական հումքի արդյունահանում և վերամշակում, պատրաստի արտադրանքի արտահանում:

Արտահանմանն ուղղված ՕՈՒՆ-ի ներգրավմանն միջազգայնորեն ընդունված և կիրառվող մոտեցում է հատուկ և ազատ տնտեսական գոտիների ստեղծումը:

6. Կարևորվել է նաև դեռևս 1997թ. Էկոնոմիկայի նախարությունում լուծարված Արտաքին տնտեսական քաղաքականության վարչության վերականգնումը: Արտաքին տնտեսական կապերի տարանջատումը՝ ըստ նախարարությունների, և ՀՀ խոշոր

ընկերությունների կողմից արտաքին տնտեսական կապերի հաստատումը խիստ թուլացնում է դրանք կոորդինացնելու, առաջնահերթությունները վերհանելու և վերջապես համակարգելու հնարավորությունները:

7. Արտահանմանն ուղղված արտադրությունները խթանելու նպատակով, առաջարկվում է ստեղծել բանկային այնպիսի մեխանիզմներ, որով կառավարությունը կկարողանա արտահանող արտադրությունները վարկավորող առևտրային բանկերի նկատմամբ դառնալ երաշխավոր:

8. ՀՀ-ում անհրաժեշտ նվազագույն ներմուծման մակարդակը պահպանելու համար առաջարկվում է ոչ թե ընդամենը ամրագրել ներմուծվող ապրանքների ցանկը և չափաքանակը (դրանով զբաղվում է ԱՎԾ) այլ մանրամասն դիտարկել այն ապրանքների անվանացանկը, որոնք մտնում են, այսպես կոչված, կրիտիկական ներմուծման մեջ, առաջին հերթին պարենային ապրանքները:

9. ՀՀ արտահանման խթանման գործում կարևորվում է նաև արտահանման վարկավորման դերը: Բանկային համակարգի նկատմամբ պակաս վստահությունը և դրանց կողմից արտահանման խթանման ինստիտուտի բացակայությունը էլ ավելի են նպաստում արտաքին առևտրային հաշվեկշռի պակասուրդի ավելացմանը: Հետևաբար, պետք է առևտրային վարկերի բազմազանությունից նախապատվությունը տրվի ֆիրմային վարկին, քանի որ վերջինս շատ ավելի շահավետ է ուղղակի գործնական կապերի ձևավորման տեսանկյունից և տալիս է փոխշահավետ համաձայնությունների հնարավորություն՝ առանց միջնորդ օղակի: Փոխադարձ վստահության ամրապնդման համար ֆիրմային վարկը կարող է զուգակցվել լիզինգի հետ:

10. Վերջին տարիներին ՀՀ առևտրային բանկերի խոշորացումը, որը դիտվում է որպես դրական երևույթ՝ դրանց ֆինանսական դիրքերի ամրապնդման տեսանկյունից, այնուհանդերձ չի ուղեկցվում բանկերի կողմից արտահանման խթանման քաղաքականությամբ: Մեր երկրում չեն ներդրվել համաշխարհային տնտեսության մեջ լայն տարածում ստացած ֆակտորինգային, ակցեպտառամբուրսային, ֆորֆետինգային վարկերը, որոնց բացակայությունն էլ, գործնականում, չի նվազեցնում արտահանման վարկերի ռիսկերի աստիճանը: Դրանց ներդրումը և բանկային ծառայությունների ինտեգրումը համաշխարհային բանկային ծառայությունների շուկային հնարավորություն կտա զարգացնելու վարկավորման այդ ձևերը ևս:

11. Հայկական արտադրության ապրանքների գովազդի գործում մեծ դեր կարող են խաղալ Ձեռնարկատերերի միությունը և Առևտրաարդյունաբերական պալատը, հյուպատոսարաններն ու դիվանագիտական ներկայացուցչությունները, որոնք կզբաղվեն տեղական գործարար շրջանակներում գովազդային գրականության տարածմամբ, կկազմակերպեն առևտրային կապերին նվիրված սեմինարներ, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղական և հայրենական գործարարների հանդիպումներ և այլն: Պետական աջակցությամբ հայաշատ մի շարք երկրներում կարելի է ստեղծել մշտական գործող առևտրային սրահներ, որտեղ կկազմակերպվեն հայկական արտադրության ապրանքների ցուցահանդես-վաճառքներ:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Մ. Գրիգորյան, «Ներմուծման փոխարինման հնարավորությունները ՀՀ-ում» // ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, Երևան 2012, էջ 369-375:

2. Մ. Գրիգորյան, «ԱՄՆ-ի տնտեսական ճգնաժամը» // Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 2: Երևան 2011, էջ 202-204:
3. Մ. Գրիգորյան, «ՀՀ տնտեսական ճգնաժամը. ՀՀ տնտեսական զարգացման հիմնախնդիրները ճգնաժամի պայմաններում» // Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 2: Երևան 2011, էջ 204-205:
4. Մ. Գրիգորյան, «ՀՀ տարածաշրջանային տնտեսական համագործակցության բազմազանեցման այլընտրանքային ուղիները» // Ֆինանսներ և էկոնոմիկա, Երևան, 2015, №11-12, էջ 81-83:
5. Մ. Գրիգորյան, «ՀՀ արտահանման համեմատական արդյունավետության գնահատումը» // Կրթությունը և գիտությունը Արցախում, 2015, №3-4, էջ 154-158:
6. Զ. Թադևոսյան, Մ. Գրիգորյան, «Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործոնները» // «Այլընտրանք հետազոտական կենտրոն», Երևան 2016, հունվար-մարտ, էջ 435-441:
7. Մ. Գրիգորյան, «Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի բազմազանեցման արդի վիճակը» // «Այլընտրանք հետազոտական կենտրոն», Երևան 2016, հունվար-մարտ, էջ 540-549:

ГРИГОРЯН МАРИНА САМВЕЛОВНА

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ДИВЕРСИФИКАЦИИ ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 – «Международная экономика».

Защита диссертации состоится 21-ого ноября 2017 года, в $14^{\underline{00}}$, на заседании Специализированного совета по экономике 008 ВАК РА, действующего при Российско-Армянском университете по адресу: 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123.

РЕЗЮМЕ

В настоящее время интернационализация производства в основном рассматривается как необходимое, но не достаточное условие для обеспечения эффективного развития экономики государства, и способ преодоления противоречий, возникающих в процессе осуществления данной задачи в результате ограниченных возможностей между странами. Страны-партнеры пытаются повысить функциональную эффективность национальной экономики за счет определенных факторов, которые возникли в ходе развития геоэкономических отношений. На пути вступления в этап политической и экономической независимости, в РА осуществлялись широкомасштабные реформы общего экономического механизма. Данный процесс включает в себя множество процессов, начиная от формирования законодательной базы, обусловленной требованиями рыночной экономики, завершая созданием благоприятных экономических условий для их реализации. В этой связи, роль иностранных рынков особенно важна для малых стран, так как их относительно небольшие внутренние рынки не обладают достаточными условиями для экономического роста. Для развития и расширения рынка важное значение имеет качество товара, исходя из соображений развития и совершенствования производства новых технологий в соответствии с требованиями научно-технического прогресса, интеграции в мировую экономику.

Изучение теоретических и практических задач диверсификации внешнеэкономических связей развивающихся и переходных экономик не носит системного характера, в силу чего поэтому анализ развития этих стран и проблемы, связанные с гармоничной интеграцией экономики РА в мировую экономику, являются объективной необходимостью.

Целью диссертационной работы является исследование проблем развития внешнеэкономических связей, приоритетов развития и стимулирования экспорта РА на современном этапе, а также выявление перспектив расширения этих связей на основе взаимовыгодного сотрудничества и обоснование предложений, которые приведут к диверсификации этих отношений.

В соответствии с поставленной целью в работе сосредоточено внимание на решении следующих исследовательских задач:

- охарактеризовать нынешнюю эпоху мировой экономики на основе критического анализа теоретико-методологических исследований геоэкономических взаимодействий;
- рассмотреть возможности развития и расширения внешнеэкономических связей РА в контексте глобализации;
- выявить факторы диверсификации внешнеэкономических связей;
- проанализировать динамику экономических отношений РА с соседними странами и выявить специфику их развития, а также возможности диверсификации внешнеэкономических связей с этими странами;
- определить альтернативные пути диверсификации регионального экономического сотрудничества РА;
- исследовать методологические соотношения понятий «структурные реформы» и «структурные преобразования»;
- оценить сравнительную эффективность экспорта РА.

Объектом исследования являются внешнеэкономические связи РА с различными странами и региональными группировками мира в современных условиях, а предметом исследования - система экономического взаимодействия РА с внешним миром.

В результате проведенного исследования получены теоретические, методические и практические результаты, из которых в качестве научной новизны можно выделить следующие:

1. Уточнена получившая распространение тактовка понятия «мировая экономика», учитывая факт институционализации мировой экономики, формирование финансовых инфраструктур, необходимых для регулирования внешнеэкономических связей стран, диверсификацию инстуремнтов экспорта и импорта.
2. С помощью эконометрических моделей было оценено взаимодействие внешнеэкономических связей Армении и выявлена высококоррелированная зависимость между ВВП, экспортом, импортом и денежными переводами, между импортом, экспортом и денежными переводами, а также денежными переводами и экспортом, которые, однако, в лаговом разрезе имеют различные проявления взаимного воздействия.
3. На основе расчета сравнительных коэффициентов специализации экспорта выявлены основные направления диверсификации экспорта Республики Армения по четырехзначной классификации товаров.

MARINA SAMVEL GRIGORYAN

THE ISSUES OF FOREIGN ECONOMIC RELATIONS DIVERSIFICATION OF THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.06 – «International Economics».

The defense of the thesis will take place on the 21st of November, 2017, at 1400 o'clock, at the Meeting of Specialized Council 008 of the SCC of the RA at the Russian-Armenian University: 123 Hovsep Emin str., Yerevan, 0051, Armenia.

ABSTRACT

Currently, the internationalization of production is mainly regarded as a necessary but not sufficient condition to ensure the effective development of the economy and a way of overcoming the contradictions that arise during the implementation of this task, as a result of disability across countries. The partner countries are trying to increase the functional efficiency of the national economy due to certain factors that arose during the development of geo-economic relations. In the stage of political and economic independence wide-ranging reforms of overall economic mechanism were implemented in the Republic of Armenia. This is a process, which includes the processes starting from the formation of the legal framework arising from the requirements of the market economy, up to creating favorable economic conditions for their implementation. In this regard, the role of foreign markets is particularly important for small countries, as a relatively small domestic market does not contain sufficient conditions for economic growth. For small states, the expansion of internal market implies the priorities of their quality standards. For the development and expansion of the market the quality of goods has an important role, for reasons of development and improvement of new technologies, in accordance with the requirements of scientific and technological progress, integration into the world economy, and harmonious fusion to global economic development.

The study of theoretical and practical problems of the diversification of foreign economic relations of developing and merging economies does not have a systemic nature, that is why the analysis of the development of these countries and problems related to the harmonious integration of Armenia into the world economy are an objective necessity.

The aim of the thesis is to study the problems of development of foreign economic relations o, development priorities and export stimulation f the Republic of Armenia at the present stage, as well as to identify the prospects of expansion of these relations on the basis of mutually beneficial cooperation and to support proposals that will lead to the diversification of these relations.

In accordance with the aim, the following issues have been identified and proposed in the present study:

- to characterize the current era of the global economy on the basis of a critical analysis of theoretical and methodological researches of geo-economic interactions,
- to consider the possibility of the development and expansion of foreign economic relations of Armenia in the context of globalization,
- to identify the factors of diversification of foreign economic relations,
- to analyze the dynamics of economic relations of Armenia with neighboring countries and to find out the specifics of their development, as well as the possibilities for diversification of foreign economic relations with these countries,
- to identify the alternative ways of diversification of RA regional economic cooperation,
- to study the methodological ratio of concepts «structural reforms» and «structural changes» and to define clearly the current challenges of RA foreign economic relations,
- to evaluate the comparative effectiveness of Armenia's exports.

The object of research is the foreign economic relations of RA with various countries and regional groupings of the world in modern conditions, and the subject of the research is the system of economic interaction of Armenia with the external world.

The following scientific results were obtained in the process of analysis, which can be classified as a scientific novelty:

1. In order to explain the new interpretation of the concept of the «global economy», a methodological basis for integration into the world economy were developed using appropriate tools, including real opportunities for specialization based on comparative advantages, diversification of export-import transactions, high level of participation in the international division of labor, etc.
2. With the help of econometric models the author has assessed the interaction of Armenia's foreign economic relations and revealed a highly correlated relationship between GDP, exports, imports and remittances, between imports, exports and remittances, as well as remittances and exports, which, however, in the lag section have different manifestations of interaction.
3. Based on the calculation of the comparative coefficients of export specialization, the main directions of the export diversification of the Republic of Armenia based on the four-digit classification of goods have been identified.